հարիւր ակեարների հետ և անցաւ մահմեդական շարժման գլուխը։ Եւ յուլիս 20—21-ին, միաժամանակ, ապստամբութիւն ծագեց Շարուր-Նախիջևանի բոլոր կողմերում։ Հայկական սակաւաթիւ թոյլ զօրամասերը Զուլֆայում, Նախիջևանում, Շահթախթում ու Բաշ-Նորաշէնում չըկարացան թուրք զինուած բազմութիւններով։ Մի քանի օրւայ արիւնահեղ կռիւներից յետոյ, յուլ. 25-ին, Նախիջևանի հայկական զօրքերը, իրենց հետ առնելով և հայ ազգաբնակութեան որոշ մասը, նահանջեցին դէպի Զանգեզուր։ Անգլիական զինուորական առաքելութիւնը և ամերիկեան նպաստամատոյցի պաշտօնեաները անցան Թաւրիզ։ Շարուրի զօրքերի մի մասը երկաթուղով քաշուեց հիւսիս, իսկ միւս մասը, Բաշ-Նորաշէնի շրջանում, յուլ. 25—26-ին, գնդ. Կարաքեշիշեանի գլխաւորութեամբ՝ ճեղքելով թշնամու ամուր շղթան՝ նահանջեց դէպի Զանախչի ու Զինջիրլու գիւղերը։ Մի քանի օրից, այս գիւղերն էլ, Ղարախաչ, Ուլուխանլու, Էրփին գիւղերի բնակիչների ու զօրքի հետ միասին, կուռվ նահանջեցին Զիւլինի վրայով, դէպի Արաջան։

Թուրքերը հետևեցին հայերին Նախիջևանից Զանգեզուրի ուղղութեամբ Նախիջևան գետի կիրճով և Շարուրից՝ դէպի Դարալագեաց՝ Արփա գետի ձորով, բայց Խաչիկ—Նորս գծից յետ մղեցին։

Այս յաջողութիւններից արբեցած, օգ. 1-ին, Թեքինսկին հեռագրում է Բագու. «Բէյոյիւք-Վեդիի, Շարուրի և Նախիջևանի շրջաններում կռիւներ են տեղի ունենում։ Հայկական գնդերը փախչում են կամ ոչնչանում։ Հաղորդեցէք, թէ ես ի՞նչ պէտք է անեմ։ Մահմեդականները դեռ չեն ցանկանում դրաւել Երևանը»։ Ու նորից. «Վերջապէս, թշնամի յայտաղրերից բացի մենք պէ՛տք է անենք իրական քայլեր··· պէ՛տք է անյապաղ պատերազմ յայտարարենք»։ Միաժամանակ, «մեր կառավարութիւնը պէտք է վճռական առաջարկ անէ անգլիացիներին, որ մեզ յանձնեն Զուլֆա—Շահթախթ երկաթուղին՝ Ալեաթ—Զուլֆա գծով՝ Պարսկաստանի հետ առևտուր սկսելու համար։ Յանձնման ենթակայ այդ գիծը պէտք է երկարի մինչև Դաւալու գիւղը» (28 յուլ.)։

Իսկ երկու օր յետոյ, օգ. 3-ին, ռազմաշունչ խանը հեռագրում է վարչապետ Խան Խոյսկիին. «Անհրաժեշտ է, որ Ազրբէջանը երկու շաբաթւայ ընթացքում մաքրէ Զանգեզուրի հաշիւը և զօրքերը առաջ քաշէ մինչև Ղամարլու։ Այժմ ամենայարմար ժամանակն է։ Հայաստանի կոմխարամերիկեան գնդապետի ժամանումից յետոյ ուշ կը լինի։ Եթէ իմ առաջարկը կընդունուի ձեր կողմից, իրագործեցէք առանց պատերազմ յայտարարելու։ Շատ եմ խնդրում, որ օգտուէք բոպէից և ժամանակ չկորցնէք»։

Օգ. 4-ին Թեքինսկին Խան Խոյսկիին տեղեկութիւններ է հաղորդում հայկական զինուորական տեղափոխութիւնների մասին, և սրանով վերջանում է նրա դաւադրական գործունէութիւնը Հայաստանում. հայկական կառավարութեան պահանջով անգլիացիք քշեցին նրան Երևանից, և ի հատուցումն իր մատուցած ծառայութիւնների նա նշանակուեց Ազրբէջանի արտ. գործ. նախարարի օգնական։ Նրա տեղը Երևան եկաւ Ազրբէջանի «ազգային բանաստեղծ» Հախվերդովը, որ անչեղ շարունակեց իր նախորդի քաղաքականութիւնը։